

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՓԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**  
պրն. Լ.Հ.Մկրտչյանին

**ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ**  
**Հովհաննես Վաչեի Թոքմաջյանից**  
(դիմողի անուն, ազգանուն)

**Երևան, Հալաբյան 33, բն.4, 093-00-10-30, 097-299-294, tokmajyan@shushitech.am**  
(բնակության վայր, հեռախոսի համար, էլ.փոստի հասցե)

**Շուշի տեխնոլոգիական համալսարան, 02Ա N 003603**  
(կազմակերպության լրիվ անվանումը, պեպ.գրանցման համարը)

**ԴԻՄՈՒՄ**

Խնդրում եմ ինձ ընդգրկել ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հանրային խորհրդի կազմում:

Կից ներկայացնում եմ պահանջվող փաստաթղթերը.

1. Կազմակերպության կանոնադրության պետական գրանցման համարը:
2. Ամփոփ տեղեկանք՝ վերջին 2 տարում Հ.Վ.Թոքմաջյանի ծավալած գործունեության վերաբերյալ:
3. Մոտիվացիոն նամակ հիմնավորում՝ հանրային խորհրդում ներգրավման աշխատանքների մասնակցության վերաբերյալ:
4. Հակիրճ վերլուծություն՝ վերջին 3 տարիների ընթացքում ԿԳՆ գործունեության և կրթության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ:

Դիմող՝

  
Հովհաննես Վաչեի Թոքմաջյան

27 ապրիլի 2016թ.

27

10026-16  
04.16

ՎԿԱՅԱԿԱՆ

02U N 003603

ԻՐԱՎԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԾԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՆ

« Եւրոֆին Կոնստրուկցիայի և ճարտարապետության ընկերություն » (անվտանգության մակարդակով բարձրագույն կարգի պաշտպանության համակարգով)

Գրանցված է պետական ռեգիստրով՝ Գրքի հարկայնաբանական կարգի

Կենտրոնական կամ Մարտի 4 կամպուսում

Պետական գրանցման համարը՝ 443.160.12374

Պետական գրանցման տարեկիսի, ամիսը, ամսաթիվը՝ 25.01.2014

Իրավաբանական անձի ծածկագիրը (կոդը)՝ 82844984

Իրավաբանական անձի տեսակը՝ Ել առնչությամբ

Գործունեության ժամկետը՝ մինչև՝ անհատական

Վկայական ուժի մեջ է մտնում ներդրողի հետ միասին:

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

*S. Sargsyan*  
(ստորագրություն)



01

2014թ.

*S. Sargsyan*

ՆԱԾԻՐ 01  
ԻՐԱՎԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԾԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՆ  
N 02U N 003603 ՎԿԱՅԱԿԱՆ

Իրավաբանական անձի անվանումը՝ « Եւրոֆին »  
Եվրոֆին Կոնստրուկցիայի և ճարտարապետության ընկերություն

Գտնվելու վայրը՝ Մարտի 4  
Մարտի 4 կամպուս

Իրավաբանական անձի գործադիր տարանջի ղեկավարը՝ Կարեն Կարենյան  
Կարենյան Կարեն Կարենյանի (անունը, ազգանունը)



Մեջ. AN 0668650 տար.՝ 22.10.2013թ. ՈՂԿ. Նոր  
տնօրենի տեղակալը, բնակչության (հաշվառման) վայրը՝  
Մարտի 4 կամպուս

Իրավաբանական անձի իրավաբանախորհրդի անվանումը և գրանցման համարը

Այլ տեղեկություններ

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

*S. Sargsyan*  
(ստորագրություն)



01

2014թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՔԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**  
պրն. Լ. Հ. Մկրտչյանին

**ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ**  
**Հովհաննես Վաչեի Թոքմաջյանից**  
(դիմողի անուն, ազգանուն)

**Երևան, Հալաբյան 33, բն.4, 093-00-10-30, 097-299-294, tokmajyan@shushitech.am**  
(բնակության վայր, հեռախոսի համար, էլ. փոստի հասցե)

**Շուշիի տեխնոլոգիական համալսարան, ՕՁԱ N 003603**  
(կազմակերպության լրիվ անվանումը, պետ. գրանցման համարը)

**ԴԻՄՈՒՄ**

Խնդրում եմ ինձ ընդգրկել ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հանրային խորհրդի կազմում:

Կից ներկայացնում եմ պահանջվող փաստաթղթերը.

1. Կազմակերպության կանոնադրության պետական գրանցման համարը:
2. Ամփոփ տեղեկանք՝ վերջին 2 տարում Հ.Վ.Թոքմաջյանի ծավալած գործունեության վերաբերյալ:
3. Մոտիվացիոն նամակ հիմնավորում՝ հանրային խորհրդում ներգրավման աշխատանքների մասնակցության վերաբերյալ:
4. Հակիրճ վերլուծություն՝ վերջին 3 տարիների ընթացքում ԿԳՆ գործունեության և կրթության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ:

Դիմող՝



Հովհաննես Վաչեի Թոքմաջյան

27 ապրիլի 2016թ.

27


10026-16  
04 16



**Ամփոփ տեղեկանք՝  
վերջին 2 տարում Հ.Վ.Թորմաջյանի ծավալած գործունեության վերաբերյալ**

2014-2016թթ. տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հովհաննես Վաչեի Թորմաջյանը հանդիսացել է.

մինչև 03.2014թ.' Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի (ներկայումս՝ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի) ռեկտոր, 03.2014-06.2015թթ.' Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ռեկտորի պաշտոնակատար, 12.2015-մինչ այժմ՝ Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ռեկտորի պաշտոնակատար:



**Մոտիվացիոն նամակ հիմնավորում՝  
հանրային խորհրդում ներգրավման աշխատանքների մասնակցության վերաբերյալ**

Հայաստանը միանալով Բոլոնիայի գործընթացին՝ պարտավորվել է արմատապես ձևափոխել բարձրագույն կրթության իր համակարգը. այն համապատասխանեցնել եվրոպական պահանջներին և չափանիշներին, դառնալ նոր կազմավորվող եվրոպական բարձրագույն կրթական տարածքի մի մասը: Ներկայումս կիրառվող կրեդիտային համակարգի կարևորագույն հատկանիշներից է ուսումնական ծրագրերի յուրացման գործընթացը տարվա կտրվածքով համամասնորեն բաշխման հնարավորությունը: Այն թեթևացնում է թե դասախոսների, և թե ուսանողների աշխատանքը: Ուսումնական կիսամյակների քննություններին և ստուգարքներին նախապատրաստվելու բեռը բաշխվում է ուսումնական տարվա կտրվածքով: Կրթության ոլորտի ներկա փուլի առավել ընդգծված հիմնախնդիրներից են.

- ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների մուտքը ուսումնական գործընթաց, էլեկտրոնային ուսումնական նյութերի պակասը.
- ավագ դպրոցի և մագիստրատուրայի ըստ էության կայացումը.
- ավագ դպրոց-համալսարան կապի ամրապնդումը.
- աշխատաշուկայի պահանջարկին մասնագիտական կրթություն ստացած շրջանավարտների հմտությունների ու գիտելիքների որակի անբավարար լինելը,
- բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերում սոցիալապես անապահով խմբերի ընդգրկվածության ցածր մակարդակը:

Հարկ է նշել, որ դեռևս լիարժեքորեն չեն օգտագործում ժամանակակից տեխնոլոգիաներ: Դասավանդողները հաճախ ուսուցման մեջ բարեփոխումներ իրականացնելու կարիք չեն տեսնում: Հայաստանի ուսումնական հաստատություններում դասավանդողների մի ստվար զանգված չի կարևորում ոչ դասի բովանդակությունը, ոչ էլ ուսանողների ձեռք բերած գիտելիքները: Այդ պատճառով, կրթական համակարգում բարեփոխումների կարևորագույն հիմնախնդիրներից է դառնում դասախոսական երիտասարդ կադրերի պահանջարկը, ովքեր ավելի լավ են տիրապետում ուսումնառության ժամանակակից տեխնոլոգիաներին: Սակայն երիտասարդ դասախոսները դեռևս չունեն աշխատանքային բավարար փորձ: Ուստի կարևոր խնդիր է դառնում սերնդափոխության իրականացման ճկուն մեխանիզմի կիրառումը:

Հայաստանում սովորողների շարժունակության ընդլայնմանը նպաստող հիմնական խնդիրներն են՝ շարժունության և փոխճանաչման եվրոպական գործիքների օգտագործումը, շարժունակության աջակցման եվրոպական ծրագրերին Հայաստանի բուհերի անբավարար մասնակցությունը, կառավարման արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը, բանակի և կրթության խնդրի համադրությունը և այլն:

Չնայած իրականացված բարեփոխումներին՝ մասնագիտական չափաքանակների սահմանման և հատկացման սկզբունքները այսօր դեռևս ամբողջական չեն արտացոլում երկրի տնտեսության զարգացման գերական ուղղությունների գծով աշխատաշուկայի իրական պահանջարկը: Ուսանողների 83%, ըստ Հայաստանի աշխատաշուկայի հետազոտության, մասնագիտությունը ընտրում է դրա "ժողովրդականություն" վայելելու պատճառով, ոչ թե աշխատաշուկայում առկա պահանջներով: Կան շատ կարևոր մասնագիտություններ, որտեղ առկա է մասնագետների պակաս, սակայն այդ մասով դիմորդներ գրեթե չեն լինում: Ակնհայտ է՝ ներկայիս կրթական համակարգը չի հասցնում արձագանքել տնտեսության զարգացող որոշ ճյուղերի պահանջներին: Այդ պատճառով անհրաժեշտ է արդյունավետ քայլեր մշակել, որով կստեղծվի արդյունավետ կապ կրթության և աշխատաշուկայի միջև: Միևնույն ժամանակ, բուհերերի ընդունելությունը կարելի է դարձնել ավելի դյուրին, որպեսզի դիմորդների մեծամասնությունը կարողանա ընդունվել, սակայն դրա փոխարեն՝ բարդացնել ուսումնական գործընթացը՝ հասցնելով այն մակարդակի, որ միայն իրենց մասնագիտությանը լավ տիրապետող ուսանողները կարողանան ավարտել բուհը: Այդպիսով, բուհերի շրջանավարտներից շատերն ավելի հեշտ կկարողանան աշխատանք գտնել աշխատաշուկայում:

Հայաստանի կրթության ոլորտի կառավարման բնագավառում իրականացված բարեփոխումները որոշակիորեն մեծացրել են ուսումնական հաստատությունների ինքնավարությունն ու պատասխանատվությունը, ընդլայնվել է կառավարման գործընթացում հասարակության մասնակցությունը: Այն բուհերը, որոնք իրենց գործունեության անցած տարիների ընթացքում մշտապես մշակել և ներդրել են մասնագիտական արդիական կրթական ծրագրեր, հետևողականորեն կիրառել են կրթության որակի ապահովման անհրաժեշտ գործընթացներ, ներկայումս գտնվում են շահեկան վիճակում: Նրանք կրթական արդյունքների մշտադիտարկման նախկինում մշակված մեխանիզմների արդյունավետ կիրառմամբ ներկայումս ևս ապահովում են ուսումնական գործունեության շարունակական բարելավում:

Ներկայումս, հարց է առաջանում, թե որքանո՞վ են արդյունավետ կատարվող փոփոխությունները, ունի արդյո՞ք Հայաստանի կրթական համակարգը Բոլոնիայի գործընթացին միանալու և բարեփոխումներ իրականացնելու անհրաժեշտ ռեսուրս, ի՞նչ քայլեր ունենք ձեռնարկելու առաջիկայում: Սրանք հարցեր են, որի պատասխանը պետք է տրվի ամենամոտ ապագայում: Այս գործընթացում կարևոր է լինելու ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հասարակական խորհրդի դերը, և դրա արդյունավետ կազմավորման դեպքում, այն կարող է դրական դեր ունենալ կրթության ոլորտի զարգացման գործում:



## Հակիրճ վերլուծություն՝ վերջին 3 տարիների ընթացքում ԿԳՆ գործունեության և կրթության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ

2013-2016թթ. ՀՀ ԿԳՆ կողմից մշակվել և համապատասխան մարմիններում ընդունվել են ոլորտը կարգավորող բազմաթիվ իրավական ակտեր: Այդպիսով հնարավոր եղավ լուծել մեծ թվով կազմակերպչական և իրավական խնդիրներ, սակայն, ըստ էության, բաց մնացին գլխավոր հարցերից մի քանիսը.

1. չի հստակեցվել այն սահմանը, որը տարանջատում է բակալավրիատը և մագիստրատուրան: Ստեծված իրավիճակը խոչընդոտում է մագիստրատուրայի կայացմանը, և առաջին հերթին՝ դրա կարևորության ընկալումն ուսանողների կողմից: Մագիստրատուրան, շատ դեպքերում, շարունակում է մնալ բակալավրիատի ձևափոխված “կրկնությունը” (տպավորություն է ստեղծվում, որ բակալավրիատում փորձ է արվում խտացված տեսքով դասավանդել դիպլոմավորված մասնագետի հնգամյա ծրագրային կուրսը, իսկ մագիստրատուրայում խորացնել բակալավրիատում անցածը), դեռևս անթույլատրելի ցածր ու ձևական է մնում հետազոտական բաղադրիչը: Դեռևս օրենսդրական կարգավորման կարիք ունի աշխատաշուկայում բակալավրի կողմից իրականացվող որոշակի գոծառոյթների վրա սահմանափակում դնելու խնդիրը. այսինքն, անհրաժեշտ է օրենսդրորեն հստակեցնել այն գործառոյթների ցանկը, որով անձը կարող է զբաղվել առնվազն մագիստրոսի որակավորում ունենալու դեպքում.
2. մասնագիտությունների խոշորացումը ՀՀ ԿԳՆ քաղաքականության կարևորագույն ձեռքբերումներից է, որը հիմնված է եվրոպական բարձրագույն կրթության առաջավոր փորձի վրա: Սակայն այն թերի է և զերծ չէ կրկնություններից: Միևնույն ժամանակ, ելնելով դիվերսիֆիկացիայի անհրաժեշտությունից, բակալավրիատում ուսման առաջին երեք տարիներին կրթությունն ըստ մասնագիտությունների անհրաժեշտ է հիմնականում (մինչև՝ 80-90%) իրակավացնել նույն կրթական մոդուլներով, և միայն մշակել չորրորդ կուրսում ընտրովի առարկայական բլոկներով ուսումնական պլանները տարանջատել ըստ ուսումնական ծրագրերի: Փորձնական ուսումնական պլանի և առարկայական ծրագրերի մշակման և դրանց քննարկման աշխատանքներին անհրաժեշտ է մասնակից դարձնել առանձին գործատուների: Մշակման ընթացքում շեշտն անհրաժեշտ է դնել սովորողների ուսումնառության վերջնական արդյունքների վրա, ինչը պետք է արտահայտվի սովորողի կողմից ստացած գիտելիքների համակազմով, սովորածը հասկանալու և վերլուծելու կարողությամբ (կարողություններ) և ստացած գիտելիքները կիրառելու ունակությամբ (հմտություններ): Փորձնական ուսումնական պլանը և առարկայական ծրագրերն անհրաժեշտ է հատմատել եվրոպական և ԱՊՀ բուհերի համապատասխան



մասնագիտություններով իրականացվող ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի հետ և վերլուծությունների արդյունքներից ելնելով կատարել համապատասխան շտկումներ: Պետք է հաշվի առնել, որ շատ համալսարաններում ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի կազմումը պայմանավորված են տասնամյակների ընթացքում ձևավորված ավանդույթներով: Դրանք հիմնականում բխում են պրոֆեսորադասախոսական կազմի սուբյեկտիվ նախասիրություններից, որոնք շատ դեպքերում "կարծրացել" են և հաշվի չեն առնում ներկայիս կյանքի կողմից թելադրված վերջնարդյունքների պահանջները: Դեռևս թույլ է ուսումնական պլանով և առարկայական ծրագրերով իրականացվող դասընթացների փոխկապակցվածության աստիճանը: Կթական ծրագրերի վերանայումները պետք է ուղեկցվեն հետևյալ պայմանների ապահովմամբ.

- վերանայման փաստարկված հիմնավորումներ.
  - միջոցառումների իրականացման ողջամիտ ժամկետներ և պատասխանատու օղակներ,
    - ներքին և արտաքին շահառուների մասնակցություն և հրապարակայնություն.
    - ելքային արդյունքների համապատասխանություն որակավորումների ազգային շրջանակին, մասնագիտության պետական չափորոշիչին և միջազգայնորեն ընդունված փաստաթղթերին.
    - ներքին և արտաքին կրթական միջավայրում և աշխատաշուկայում ուսանողների, շրջանավարտների և դասախոսների պահանջվածություն և շարժունակության հնարավորություններ.
    - ուսումնամեթոդական, ռեսուրսային և կադրային ներուժի առկայություն.
    - հետազոտական և արտադրական գործունեության հետ առնչությունների շրջանակ.
    - շարունակական կրթության հնարավորություններ.
    - արդիական տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման շրջանակներ:
- Նշված խնդրի լուծումը հնարավորություն կընձեռի շրջանավարտներին ներկայացվող ելքային արդյունքները համապատասխանեցնել միջազգայնորեն ընդունված պահանջներին, ինչն իր հերթին ներքին և արտաքին աշխատաշուկայի պահանջների բավարարման առաջնային պայման է.
3. արմատապես պետք է վերանայվեն ավագ դպրոցին ներկայացվող պահանջները: Շատ դեպքերում այսօր դրանք ունեն ցածր արդյունավետություն, իսկ 12-րդ դասարաններում ուսուցման կազմակերպման ձևն անընդունելի է: Ավագ դպրոցներում ուսուցումը պետք է կազմակերպվի խիստ ուղղորդված (որոշիչ առարկաններ ըստ ուղղությունների գումարած լեզուներ)' միայն բարձր

առաջադիմություն արձանագրող սովորողների համար: Պետք է կարգավորվի ավագ դպրոց – բուհ անցումը՝ զուգահեռ ընդունելության գործող համակարգի.

4. դեռևս բավականաչափ կարևորված չէ պրակտիկաների անցկացման անհրաժեշտությունը: Արտերկրի հեղինակավոր համալսարաններում ուսանողը տարվա մեջ մի քանի ամիս (սովորաբար՝ 3 ամիս) անցնում է ուսումնական և արտադրական պրակտիկա (հիմնականում՝ արտերկրում): Այս հարցի կարգավորումը շարունակում է արդիական մնալ դեռևս խորհրդային ժամանակներից.
5. ժամանակն է հանրապետությունում ունենալ մի քանի հետազոտական համալսարաններ (ոչ ձևական): Իսկ մյուս համալսարաններում, պետք է խրախուսվի դասախոսների գիտահետազոտական գործունեությունը (ավելին՝ հետազոտական գործունեությամբ չգրադվող դասախոսը, առնվազն պետք է ունենա այլ կարգավիճակ).
6. դասախոսական կազմի վերապատրաստման և որակավորման պահանջների խստացումը դարձել է օրվա հրամայական և կարիք ունի օրենսդրական կարգավորման.
7. որակի գնահատման, մշտադիտարկման, փորձաքննության անցկացման մեխանիզմների հստակեցումը, այդ գործընթացում արտաքին շահակիցների մասնակցությունը, ենթակառուցյի գործունեության հասանելիության ապահովումը, բուհերի հաշվետվողականության և աշխատանքի թափանցիկության ապահովումը բարելավման կարիք ունի: Մասնավորապես անտրամաբանական է, երբ Մասչուսեթի տեխնոլոգիական ինստիտուտը բացում է իր ուսումնական պլաններն ու ծրագրերը, իսկ մեր համալսարանները դրանք պահում են գաղտնի.
8. կրթական միջավայրի արդյունավետության ապահովման համար բուհի կողմից ուսումնառողներին տրամադրվող խորհրդատվական և աջակցության ծառայությունները, ինչպես նաև ուսումնական գործընթացի բարելավմանն ուղղված ծրագրերը ընդլայնման կարիք ունեն: Խնդիրներ կան կապված ակադեմիական խմբերում փոքր թվով ուսանողների առկայության հետ: Որոշ բուհերում այս դեպքերում մեխանիկորեն իջեցվում է պարապմունքների քանակը, ինչը հակաօրինական և արատավոր գործելաոճ է.
9. բուհի նպատակների արդյունավետ կազմակերպումն իրականացնելու, ինչպես նաև անհրաժեշտ ուսումնական միջավայրի ստեղծման համար անհրաժեշտ է մեխանիզմներ մշակել համալսարան – գործատու կապերը օրենսդրորեն հստակեցնելու ուղղությամբ: Հասարակության հետ կապերի ձևավորման, ինչպես նաև հետադարձ կապի ապահովման տեսանկյունից հստակեցման անհրաժեշտություն կա բուհերի պաշտոնատար անձանց վարվելակերպի և էթիկական նորմերի հետ կապված:

